ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

Հ. Եգանյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՆԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԱՍՍԻՆ

Իրանը ագրարային երկիր է, որտեղ գերիշխում են ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունները։ Իրանի արդյունաբերությունը, գլխավորապես թեթև արդյունաբերությունը, սկսեց զարգանալ միայն վերջերս՝ 30-ական թվականներից հետո։

Երկրի տնտեսական զարգացման հետամնացության հիմնական պատճառները հանդիսանում են՝ ֆեոդալա-կալվածատիրական միջնադարյան հարաբերությունների առկայությունը, նրա հարկային սիստեմը, օտարերկրյա իմպերիալիզմի քայքայիչ դերը, դրանցից բխող պետական ապարատի նեխվածությունը և այլն։ Իրանի բնակչության գերակշռող մեծամասնությունը կազմող գյուղացիությունը, իր վրա կրելով կալվածատերերին տրվող ռենտայի, ամբողջ պետական հարկերի ծանր բեռը, որը, ինչպես կտեսնենք, կազմում է նրա արտադրանքի ավելի քան 80 տոկոսը և այլ տնտեսական ու արտատնտեսական պարտավորություններ, չունի ոչ նյութական հնարավորություններ և ոչ էլ սոցիալ-իրավական պայմաններ երկրի տնտեսությունը զարգացնելու համար։

Ներկայումս Իրանի ամբողջ տերիտորիայի համեմատաբար չնչին տարածությունն է պիտանի մշակման համար։ Երկրի ամբողջ տերիտորիայի միայն մեկ քառորդ կամ մեկ երրորդ մասն է մշակման ենթակա, որից մոտավորապես 1.5 միլիոն հեկտարը անտառներ և թփուտներ են։ Իրանի գյուղատնտեսական մինիստրության տվյալների համաձայն ամբողջ երկրում «թանաբաղ» և «այեշբանդի» հողերը, այսինքն՝ հարոս և ժամանակավորապես չցանվող հողերը կազմում են 11 300 000 հեկտար, ցանվում են միայն 3 700 000։ Ըստ այդ տվյալների ներկայումս ցանքսերի, գյուղատնտեսական նշանակություն ունեցող անտառների, հարոս, չօգտագործվող, բայց պիտանի հողերի ամբողջ տարածությունը կազմում է 18,5 միլիոն հեկտար, այսինքն երկրի ամբողջ տերիտորիայի 11 տոկոսը։

---

[1] Վերոհիշյալ տվյալները համեմատաբար ավելի ստույգ են թվում։ Իրանական աղբյուրները հակասական են և երբեմն չափազանցված։ Օրինակ, Իրանի բանակի գլխավոր շտաբի հրատարակած «Իրանի ուղեցույց» գրքում (1952 թ. راهنمای ایران نشریه دائره جغرافیائی ستاد ارتش) ասվում է, որ ցանվող հողերի տարածությունը կազմում է 10 միլիոն հեկտար (էջ 101), որից ամեն տարի 5 միլիոն հեկտարը ցանվում է, իսկ 5 միլիոն հեկտարը հանդիստ վիճակում է թողնվում։ Արոտավայրերի տարածությունը 20 միլիոն հեկտար է, իսկ անտառներինը՝ 18—20 միլ. հեկտար։ Մինչդեռ «Իրանի գյուղացիներին օգնող» պրոգրեսիվ կազմակերպության տվյալների համաձայն, երկրի ամբողջ տերիտորիայի 11,5 տոկոսը ցանվում է, 17 տոկոսը անտառային, իսկ 20,17 տոկոսը ցանքսի համար պիտանի, բայց այժմ ամայի հողերն են կազմում (1952, գեկտ. 26 «رهبر» «Բաթերթ»)։

Չնայած, որ տվյալները բազմազան են և տարբեր, բայց մի փաստ կասկածից վեր է, այն, որ հողի նկատմամբ կալվածատիրական սեփականությունը և գյուղատնտեսության մեջ իշխող ֆեոդալա-կալվածատիրական հարաբերությունները երկրի պոտենցիալ հարստությունների օգտագործումը նվազագույն չափից այն կողմ չեն տանում։ Վերցնենք թեկուզ միայն Խուզիստանի նահանգի հնարավորությունները։

1946 թվականի մայիսին Իրանի գյուղատնտեսության մինիստր Ամիր Ալային հայտարարեց, որ Խուզիստանի Կարուն գետի աջ ափին գոյություն ունի մոտավորապես 300 հազար հեկտար հող, որից օգտագործվում է ընդամենը 100 հազար հեկտար, իսկ մնացած 200 հազարը կարելի է մշակելի դարձնել գետի վրա ամբարտակներ կառուցելու միջոցով։ Իսկ Զահեդիի կառավարության գյուղատնտեսության մինիստրի տեղակալ Մուսթաֆա Զահեդին 1954 թվականին հայտարարեց, որ ամբողջ Խուզիստանում 5 միլիոն հեկտար վարուցանքի պիտանի հող գոյություն ունի։

Ըստ որոշ տվյալների, մշակվող մոտ 3 700 000 հեկտար հողից մոտավորապես 2 300 000 օգտագործվում է, այսպես կոչված, «զերաաթե շաթի» (زراعت شتی), այսինքն՝ աշնանացանի, և մոտ 1 400 000 հեկտար «զերաաթե սեյֆի» (زراعت صیفی), այսինքն՝ գարնանացանի համար։ Աշնանացանի մոտ երեք հինգերորդը ոռոգվում է բնական ձևով, այսինքն՝ անձրևներով և կոչվում է «զերաաթե դեյմի» (زراعت دیمی), իսկ երկու հինգերորդը արհեստական ոռոգումով, որը կոչվում է «զերաաթե աբի» (زراعت آبی)։ Գարնանացանից բնական ձևով ոռոգվում է միայն մեկ տասներկուերորդ մասը, իսկ արհեստական ոռոգումով՝ մնացած տասնմեկ տասներկուերորդականը[1]։

Համառոտակի բնութագրելով Իրանի օգտագործման ենթակա ամբողջ տերիտորիայի տարածությունը, այժմ անդրադառնանք մեր հիմնական հարցին, թե ում է պատկանում հողը, և նրանից ստացված ամբողջ եկամուտը ինչպես է բաշխվում բնակչության տարբեր դասակարգերի միջև։ Մի եկամուտ, որ ներկայումս կազմում է տարեկան մոտավորապես 25,5

«اطلاعات» թերթը իր 1953 թ. հունիսի 28-ի համարում գրում է, որ 1947 թվականի պաշտոնական տվյալների համաձայն գյուղատնտեսության համար պիտանի հողերը կազմում են 164 միլիոն հեկտար, որից 78,5 միլիոն հեկտարը ամայի, 17 միլիոնը անտառ և միայն 4,5 միլիոնն է ցանվում։ International Labour Review, Geneva, 1949, vol. LIX, № 5, էջ 551, գրում է, որ ցանքատարածությունը կազմում է 15—16 միլիոն հեկտար, անտառները 20 միլիոն հեկտար, իսկ արոտավայրերը 8—10 միլիոն հեկտար։ Մերձավոր Արևելքի երկրների ագրարային հարաբերությունների խոշոր մասնագետ Բոնեն իր «Land and Population in the Middle East» հոդվածում (Middle East Journal, 1951, № 1, էջ 54) մշակված հողերը 10 միլիոն հեկտար է համարում, որից իրիգացիայով մշակվող հողերը կազմում են 2 միլիոն հեկտար։

Միավորված Ազգերի տնտեսական գործերի դեպարտամենտի տվյալներով, մշակելի հողերը կազմում են 20 330 000 հեկտար, այսինքն ամբողջ տերիտորիայի 12,6 տոկոսը, իսկ արոտավայրերը կազմում են 24 400 000 հեկտար (United Nations Department of Economic Affaires, Land Reform, Defects in Agrarian Structure as Obstacles to Economic Development, New York, 1951, էջ 96)։

[1] «راهنمای ایران نشریه دائره جغرافیائی ستاد ارتش تهران ۱۳۳۰»، էջ 104։

միլիարդ ռիալ, կամ 785 միլիոն դոլլար[1], որը ներկայացնում է ազգային ամբողջ եկամտի մոտ 85 տոկոսը[2]։

Ներկայումս Իրանում գոյություն ունի հողային սեփականության չորս հիմնական ձև։ Նախ՝ ամլաքե արրաբի (املاك اربابی), այսինքն, այն հողերը, որոնք պատկանում են խոշոր և միջին կալվածատերերին, երկրորդ՝ ամլաքե խորդեմալիքի (املاك خردەمالکی), այսինքն՝ մանր հողատերերի կալվածքները, երրորդ՝ ամլաքե խալիսե (املاك خالصه), այսինքն՝ պետությանը պատկանող հողեր, և չորրորդ, ամլաքե վակֆ (املاك وقف), այսինքն՝ մզկիթապատկան և այլ նվիրատուական հողերը։ Բացի հողային սեփականության այս հիմնական ձևերից, կան նաև երկու այլ ձևեր, առաջինը ամլաքե իլյաթի (املاك ایلاتی), այսինքն՝ վաչկատուն ցեղերին և նրանց պետերին պատկանող հողեր, որոնք փաստորեն կարելի է դասել խոշոր կալվածատիրական հողերի շարքը և երկրորդ՝ ամլաքե ումումի (املاك عمومی), որոնք հին համայնական հողերի վերջին մնացուկներն են և կազմում են աննշան մի տարածություն։

Իսկ ինչպիսին է հողային սեփականության այս ձևերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը երկրի ամբողջ հողային սեփականության մեջ։ Այս հարցում ևս դանադան աղբյուրների տվյալները տարբերվում են։

Ըստ իրանական և Միավորված Ազգերի աղբյուրների՝ գյուղացիության 60 տոկոսը միանգամայն հողազուրկ է, 22 տոկոսը մեկ հեկտարից պակաս հող ունի, 10 տոկոսը 1—3 հեկտար, 6 տոկոսը՝ 3—20 հեկտար և այլն։ Մշակվող հողերի ամբողջ տարածության ընդամենը 17 տոկոսը պատկանում է նրանց, ովքեր երեք հեկտարից պակաս հող ունեն, մինչդեռ 56 տոկոսը պատկանում է խոշոր կալվածատերերին, որոնք բոլոր հողատերերի մեկ տոկոսն են կազմում[4]։

Ըստ Սովետական Մեծ Էնցիկլոպեդիայի տվյալների՝ մշակվող հողերի մոտ 80 տոկոսը գտնվում է կալվածատերերի ձեռքում, 15 տոկոսը կազմում են պետական, վակֆային և շահի հողերը, և միայն մշակվող հողերի 5 տոկոսն է պատկանում գյուղացիությանը։ Գյուղացիության ոչ պակաս

---

[1] «Middle East Journal», 1951 թ., № 2, էջ 184։ Մի ուրիշ աղբյուր այդ գումարը հասցնում է մինչև 791 955 000 դոլլարի՝ 1947 թվին։ («Foreign Agriculture», Washington. 1949 sept., էջ 213)։

[2] Экономика и внешняя торговля капиталистических стран, Москва. 1954. стр. 213.

[3] «مسعود کیهان جغرافیای مفصل ایران قسمت ۳ اقتصادی تهران ۱۳۱۱» էջ 53։

[4] Տվյալները նշված են «Գյուղացիներին օգնող» միության նամակում, ուղղված ժամանակի պրեմիեր Մոսադդիկին (1952, նոյ. 28 ها.)։ Նույն տվյալները նշվել են նաև «Բանդե Մարդոմ»-ում, 1953 թ. մարտի 21 (بانك مردم) և մեջ են բերվել «Краткие сообщения института Востоковедения», 1953, X։ իսկ Միավորված Ազգերի անտեսական գործերի դեպարտամենտի տվյալներով, գյուղացիության 60 տոկոսը միանգամայն հողազուրկ է, 25 տոկոսը ունի մեկ հեկտարից պակաս հող, 10 տոկոսը՝ 1—3 հեկտար (United Nations Department of Economic Affaires, Land Reform, Defects in Agrarian Structure as Obstacles to Economic Development, New York, 1951. էջ 14)։

քան 85 տոկոսը հողազուրկ է և աշխատում է կալվածատիրոջ հողի վրա՝ արենդով[1]։

Պատկերը ավելի պարզ է դառնում, երբ վերցնում ենք առանձին նահանգների հողային սեփականության բաշխումը։ Օրինակ, Արաքի շրջանում կես միլիոն բնակչությունից ընդամենը 40 հազարը ապրում է քաղաքում, իսկ մնացածը «ամբողջովին թշվառության և զրկանքների մեջ» գյուղերում, որի վարելահողի «82 տոկոսը պատկանում է խոշոր կալվածատերերին և միայն 18 տոկոսը գյուղացիներին և խորդեմալիքներին»[2]։ Մազենդարան նահանգի վարելահողերի 60 տոկոսը պատկանում է կալվածատերերին, 15 տոկոսը կազմում են վակֆային հողերը, 5 տոկոսը գյուղացիներինն է, իսկ մնացածը պետական և շահի հողերն են։

Գյուղատնտեսական խոշոր նշանակություն ունեցող Ադերբայջանի նահանգում մշակվող հողերի 75—80 տոկոսը պատկանում է կալվածատերերին, 12 տոկոսը պետությանն ու մզկիթներին և միայն մնացած չնչին մասն է պատկանում սակավահող գյուղացիներին։

1949 թվականին Իրանի, այսպես կոչված, «Յոթամյա պլանի ադմինիստրացիայի» ստատիստիկայի բաժինը Թեհրանի և Դամավանդի շրջանի 1300 գյուղերում տվյալների փորձնական հավաք կազմակերպեց։ Արդյունքները ցույց տվեցին, որ գյուղական ընտանիքների 60 տոկոսը միանդամայն հողազուրկ է, 25 տոկոսը ունի ավելի պակաս քան մեկ հեկտար և մոտ 10 տոկոսը 1—3 հեկտար հող։ Այլ խոսքով, գյուղացիության 95 տոկոսը տիրում էր ամբողջ վարելահողի ընդամենը 17 տոկոսին։ Հողատերերի մեկ տոկոսը կազմում էին 20 հեկտարից ավելի հող ունեցողները, որոնց մեկ հինգերորդը ուներ 100 հեկտարից ավելի[3]։

Ինչպես տեսնում ենք, տվյալների բազմազանությունը չի փոխում խնդրի էությունը, այն, որ ժամանակակից Իրանում հողերի գերակշռող մեծամասնությունը պատկանում է կալվածատերերին, հատկապես խոշոր կալվածատերերին։ Նրանց է պատկանում նաև գյուղատնտեսական արտադրության համար էական նշանակություն ունեցող ջուրը։ Գյուղացիական բազմամիլիոն մասսաները հողազուրկ են և ստիպված են աշխատել կալվածաաերերի հողերի վրա։ Հենց այդտեղից էլ բխում է երկրի գյուղատնտեսության մեջ իշխող ֆեոդալ-կալվածատիրական հարաբերությունների բնույթը, հետևաբար և ամբողջ Իրանի տնտեսության հետամնացությունը։

Իրանի Առողջապահության մինիստրության տվյալների համաձայն, երկրում գոյություն ունի 40 545 գյուղ[4]։

Իրանում առանձին անհատական բնակեցությունը հազվագեպ երևույթ է։ Գյուղերը ընդհանրապես հիմնված են ջրի այնպիսի աղբյուրի մոտ, որը

---

[1] Որոշ չափով տարբերվում են սովետական աղբյուրների մյուս տվյալները։ Օրինակ՝ „Мировое хозяйство и мировая политика" ժուռնալի 1946 թ. № 4—5-ում այդ թվերը այնպես են բաշխված, որ ամբողջ վարելահողերի 80 տոկոսը պատկանում է կալվածատերերին, պետությանը և հոգևորականներին և միայն 17 տոկոսը՝ գյուղացիությանը։ Գյուղացիության 60 տոկոսը հողազուրկ է, 32 տոկոսը սակավահող և այլն։

[2] «دهقان ایران», 1953, փետր. 13։

[3] «Middle East Journal», 1951, № 2, էջ 183։

[4] «رنگین کمان», 1953, հուլիսի 10։

կարող է բավարարչափով ոռոգել շրջակա հողերը։ Համեմատարար մեծ թիվ են կազմում սահմանափակ տնտեսություններ ընդգրկող գյուղերը, որտեղ սովորաբար բնակվում են մի քանի ընտանիքներ։ Որոշ գյուղերի ամբողջ բնակչության թիվը չի գերազանցում հարյուր հոգուց, հատկապես այն դեպքում, երբ գյուղը հեռու է ընկած գլխավոր խճուղուց։ Մի քանի հարյուր ընտանիք ունեցող մեծ գյուղերը շատ հազվադեպ են։ Մշակելի հողերով հարուստ շրջաններում, նույնիսկ, ավելի շուտ մի քանի իրարից ոչ հեռու մանր գյուղերի կարելի է հանդիպել, քան թե մի մեծ գյուղի, որովհետև գյուղատնտեսության հետամնացության պատճառով գյուղացու հիմնական բնակավայրին մշակելի հողի մոտ գտնվելը ունի ակընհայտ առավելություն։

Հողը մշակում են գյուղացիները։ Մշակելու համար գյուղացիներին վարձով տրված հողը չափվում է երկու ձևով, վարելահողի կամ ջրի բաժնի չափով։ Առաջինի չափը տարբեր վայրերում փոփոխական է։ Բայց հիմնական նախադրյալը համընդհանուր մի չափ է, որը երկրի մեծ մասում կոչվում է «ջուֆթ» (جفت), որը արաբերեն բառացի նշանակում է մեկ զույգ, այսինքն, այնքան հող, որ կարելի է մշակել երկու եզան միջոցով։ Միջին թվով ջուֆթը ներկայացնում է մեկ ու կես կամ երկու հեկտար։ Արևելյան Իրանում տարածված է պարսկական «զոջ» (زوج) տերմինը, որը նույնպես նշանակում է մեկ զույգ, այս տերմինը Խորասանի որոշ մասերում նշանակում է նաև ջրի որոշ միավոր։ Խուզիստանում վարելահողը չափվում է «խիշ»-ով (خیش), որը նշանակում է գութան։ Անհրաժեշտ է նշել, որ գյուղի վարելահողերի այդպիսի մասերի բաժանելը տարածված է թե կալվածատիրական և թե մանր-գյուղացիական սեփականություն հանդիսացող գյուղերում։ Դա տիպական է Ադերբայջանի, Քուրդիստանի, Համադանի, Արաքի, Ըսֆահանի, Ֆարսի, Խուզիստանի և Թեհրանի նահանգների գյուղերում։ Բացառություն է կազմում, օրինակ, Ֆարսի Խիր շրջանը, որտեղ ամեն մի միավորը բաղկացած է 5 մարդուց և 4 եզներից, իսկ Խուզիստանի Ագիլիում ամեն մի միավորը բաղկացած է 6 մարդուց և 4 եզներից[1]։

Հողային միավորների չափերը տարբերվում են երկրի զանազան շրջաններում։ Ընդհանրապես մի զույգ եզան օգնությամբ կարելի է ցանել 1—6 խարվար (խարվարը հավասար է 300 կիլոյի)։ Խուզիստանում հողային տարածության մեկ միավորը կազմում է այնքան հողամաս, որտեղ ցանվում է 3 Ահվազի ման (Ահվազի մանը հավասար է 50 կիլոյի) ցորեն և 6 ման գարի՝ մեկ էշի օգնությամբ, 12 ման ցորեն և 8 ման գարի՝ մեկ ձորու օգնությամբ, և մոտ 15 ման ցորեն և 15 ման գարի՝ մատակ ձիու միջոցով։

Վարելահողերի բաժինները որոշելիս հիմք է ընդունվում ոչ միայն հողի տարածությունը, այլ հաշվի է առնվում նաև հողի բերքատվության աստիճանը։ Միջին թվով գյուղացու ընտանիքի կողմից մշակվող հողի քանակը կարող է լինել 1—4 կամ 5 ջուֆթ։ «Հինգ ջուֆթ հող մշակող գյու-

[1] *Raj Narain Gupta*, Iran, An Economic Study, New Delhi, 1947, էջ 50։

գագին համարվում է բարեկեցիկ մարդ։ Գյուղացիների վարելահողերի մեծ մասը 1—3 ջուֆթ է»[1]։

Ինչպես վկայում է Իրանում ամերիկյան 4-րդ կետի նախկին դիրեկտոր Հարիսը, ավելի խիտ բնակեցված վայրերում հող ձեռք բերելու մրցավազքը այնքան ուժեղ է, որ յուրաքանչյուր գյուղացուն հասնող հողի տարածությունը գնալով կրճատվում է «և կալվածատերերը գործարքների հսկայական հնարավորություն են ձեռք բերում...»[2]։

Ջրի բաժնի չափով վարելահողերի բաշխումը կատարվում է ժամանակի հավասար տևողությամբ տվյալ շրջանի ջուրը մի շարք մասերի բաժանումով։ Ըստ որում այս դեպքում յուրաքանչյուր տարի վարելահողերի նոր բաժանում չի կատարվում։

Գյուղացիության մեծամասնությունը հողը վարձակալում է կալվածատիրոջից կամ էլ աշխատում է որպես բատրակ։ Գյուղացիները հողը կալվածատիրոջից վարձակալում են սահմանված կամ չսահմանված ժամկետով. այդ գործարքները կատարվում են առանց որևէ գրավոր փաստաթղթի՝ բանավոր։ Երբեմն, շատ հազվադեպ, գյուղացին ի վիճակի է լինում, բացի իր աշխատանքից, տրամադրելու նաև սերմացու, անասուններ և գյուղատնտեսական գործիքներ, կամ թե դրանցից որևէ մեկը։

Վարձակալության, այսինքն՝ մշակվող հողի նկատմամբ գյուղացու իրավունքի ապահովության հարցը ունի շատ կարևոր նշանակություն։

Իրականում գյուղացու վարձակալական իրավունքը ոչնչով չի երաշխավորվում և չի ապահովված։ Կալվածատերը կամ սուբարենդատորը փաստորեն կարող է ցանկացած ժամին վարձակալ գյուղացուն դուրս վտարել։ Քիրմանում, օրինակ՝ բերքից ստացված գյուղացու բաժինը բաշխվում է երեք մասի՝ արդար, խեշտդար և բարդար. արդարը՝ հողը մշակման նախապատրաստելու համար, խեշտդարը՝ վարելու և ցանելու համար, իսկ բարդարը՝ քաղելու և կալսելու համար։ Եթե գյուղացին հողից վտարվի իրանական նոր տարվա ժամանակ (գարնանը), ապա նա կստանա իր բաժնի միայն մի երրորդը, իսկ եթե վտարվի նախքան բերքահավաքը, ապա կստանա իր բաժնի երկու երրորդը, վտարված գյուղացու փոխարեն եկած նոր վարձակալի բաժնից պակասեցվում է այն, ինչ տրվել է նախորդին։ Որոշ վայրերում վարձակալին հողից հեռացնելու որոշ ժամկետներ է սահմանված. այսպես՝ Քիրմանում գյուղացուն կարելի է վտարել կամ նոր տարուն, այսինքն մարտ ամսին, կամ մեհր ամսին (սեպտեմբեր-հոկտեմբերին)[3]։

Իրանում հողօգտագործման ապահովության բացակայության մասին է վկայում նաև անգլիական «Ֆորթնայթլի» ամսագրի հետևյալ հայտարարությունը. «...մի քանի իրար հաջորդող տարիներ նույն հողամասը մշակելու գյուղացու շանսերը այնքան քիչ են, որ ոչ ոք չի ձգտում արտակարգ խնամքի և քաղհանի միջոցով հողը բարեկարգել։ Մի գյուղացի ասում էր. «Ի՞նչ օգուտ կա ծառեր տնկելուց, դրանից միայն կալվածատերը կշահի»[4]։

---

[1] „Journal of Farm Economics", USA, 1948, vol. XXX, № 3, էջ 425։
[2] „Foreign Agriculture", 1953 փետր., էջ 32։
[3] A. K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953, էջ 295։
[4] „The Fortnightly", 1952 փետր., № 1022, էջ 103։

Ինչպես ասվեց, Իրանի վարելահողերի գերակշռող մասը պատկանում է կալվածատերերին, որը նրանք վարձու են տալիս սուրբարենդատորներին կամ գյուղացիներին։ Հազվադյուտ պարագաներում է, որ իրենք՝ կալվածատերերը զբաղվում են իրենց հողերի մշակումով՝ օգտագործելով բատրակներին։ Կալվածատերերն իրենց հողերն ընդհանրապես վարձով են տալիս երեք սիստեմով։

1. Մոզարեե կամ կիսբարային սիստեմ։ Այս սիստեմի համաձայն՝ հողը վարձով է տրվում վարձակալ-մշակողին որոշակի ժամկետով, բերքից որոշակի մաս ստանալու պայմանով։ Կալվածատերը լրիվ հսկողություն է սահմանում գյուղացիների և նրանց աշխատանքների վրա։

2. Սահմանված վճարի սիստեմ։ Այս դեպքում վարձակալ-մշակողը կալվածատիրոջը վճարում է նախապես որոշված մի գումար, անկախ ստացվող բերքի քանակից։

3. Կոնտրակտի սիստեմ։ Սա մեծապես տարբերվում է նախկին երկու ձևերից նրանով, որ հողը վարձով է տրվում այնպիսի անձնավորության, որն ինքը անմիջականորեն չի մշակում հողը։ Նա, կալվածատիրոջը մի որևէ գումար վճարելով, իրավունք է ստանում վերջինիս հասանելիք բաժինը դանձել գյուղացիներից։ Սա հենց սուրբարենդան է։

Վերոհիշյալ երեք սիստեմից ամենից տարածվածը հանդիսանում է առաջինը՝ մոզարեեն կամ կիսբարային սիստեմը։ Հողը վարձով վերցնելը կոչվում է էջարե (اجاره), վարձակալը կոչվում է էջարեդար (اجاره دار), իսկ պայմանագիրը էջարենամե (اجاره نامه)։

Իրանում վարձավճարը դանձելու երեք ձև գոյություն ունի. նախ՝ ջինս (جنس մթերք), այսինքն՝ վարձավճարի ստացումը նատուրայով, երկրորդ՝ նագդ (نقد կանխիկ), այսինքն, երբ վճարվում է կանխիկ դրամով և, վերջապես՝ խառն ձևը, երբ մի մասը դանձվում է նատուրայով, մյուս մասը դրամով, նայած վարձատուի և վարձակալի համաձայնությանը։ Խառն ձևը հատկապես տարածված է պետական հողերում, որի մեջ երբեմն մտնում է նաև մթերքը պետական պահեստ վոխադրելու պարտականությունը։ 1930 թվականի օրենքով կառավարությունն ուզում էր վարձավճարի միայն նագդ (կանխիկ) ձևը միասնական դարձնել ողջ երկրի համար։ Բայց այդ չիրականացավ, և մինչև այսօր էլ Իրանում պահպանվել են վերոհիշյալ երեք ձևերը, քանի որ խոշոր կալվածատերերը հիմնականում գերադասում են նատուրալ վարձավճարը, որը նրանց ապահովում է լրացուցիչ եկամուտներ ի հաշիվ անմիջական արտադրողի՝ գյուղացու։

Մոզարեեի կամ կիսբարային սիստեմի հիմքում ընկած է հին, միջնադարյան հինգանդամյա ֆորմուլան, ըստ որի բերքը բաժանվում է հինգ մասի, ամեն մի մասը գյուղատնտեսության բաղկացուցիչ հինգ տարրերից մեկի դիմաց։ Այսպես ուրեմն, ըստ այդ կարգի, հողագործությունը բաղկացած է հետևյալ տարրերից՝ 1) հողից, 2) ջրից, 3) սերմացուից, 4) անասուններից, 5) աշխատուժից։ Որոշ հազվագյուտ դեպքերում էլ հողագործական գործիքները հաշվվում են որպես ինքնուրույն, առանձին ֆակտոր, և այդ դեպքում դառնում է վեց տարր, բայց ընդհանրապես հողագործական գործիքները, որոնք շատ պրիմիտիվ են, պատկանում են գյուղացուն։ Այսպիսով, ստացված բերքը բաժանվում է հինգ մասի և յուրաքանչյուր մաս հատկացվում ըստ տարրերի պատկանելիության։ Քանի որ

գյուղացին որպես կանոն չունի ոչ հող և ոչ էլ ջուր, և շատ հաճախ էլ սերմացու ու աշխատող անասուն, որը նա որոշ շրջաններում ստիպված է առանձին վարձակալել, ապա նա այդ գործարքում հանդես է գալիս միայն իր աշխատուժով, հետևաբար ստանում է ամբողջ բերքի միայն մեկ հինգերորդ մասը։ Սա բերքի բաժանման ամենատարածված եղանակն է ամբողջ Իրանում։ Բայց նույն հիմունքներով կա նաև բաշխման մի այլ եղանակ, որը կիրառվում է երկրի առանձին շրջաններում։ Այդ եղանակը կոչվում է սեյեկբար, նիսֆաքար, և չերեքդար (سه‌یکبار، نصفکار، حرکدار)։ Սեյեկբար եղանակով և բերքը բաշխվում, երբ գյուղացին կալվածատիրոջից վերցնում է հողը, սերմացուն և անասունները։ Բերքահավաքի ժամանակ կալվածատերը հողի դիմաց նախ վերցնում է բերքի մեկ հինգերորդ մասը, ապա մնացածը բաժանում է երեք մասի՝ որից երկուսը կալվածատիրոջն է հասնում, մեկը՝ գյուղացուն։

Նիսֆաքար եղանակը կիրառվում է այն պարագայում, երբ անասուններն ու հողագործական գործիքները պատկանում են գյուղացուն։ Այս դեպքում ևս բերքի մեկ հինգերորդ մասը կալվածատերը վերցնում է հողի դիմաց, իսկ մնացածը բաժանվում է երկու մասի, որից մեկը հասնում է կալվածատիրոջը, իսկ մյուսը՝ գյուղացուն։

Չերեքդարը այն ժամանակ է կիրառվում, երբ գյուղացին ոչինչ չունի և հանդես է գալիս միայն իր աշխատուժով։ Այս պարագայում կալվածատերը նախ վերցնում է բերքի չորս հինգերորդ մասը, այնուհետև մնացած մեկ հինգերորդը բաժանում է չորս մասի, որից միայն մեկն է հատկացնում գյուղացուն, այսինքն՝ գյուղացին ստանում է ամբողջ բերքի մեկ քսաներորդ մասը։ Չերեքդարը կիրառվում է հազվագյուտ դեպքերում, այն էլ բրնձի ցանքսերի շրջաններում։

Այսպիսով, եթե պատահի, որ գյուղացին անասուններ, սերմացու ու գործիքներ տրամադրի և կալվածատիրոջից վերցնի միայն հողն ու ջուրը, ապա բերքը բաժանվում է երեք մասի, կամ, ինչպես կոչվում է, երեք քուֆեյի (دو کف ه)، որից երկու մասը գյուղացին է ստանում, մի մասը՝ կալվածատերը։ Բայց այսպիսի վարձակալություն ընդհանրապես քիչ է պատահում։ Նման դեպքերում ավելի հաճախ կարելի է հանդիպել երկքուֆե (دو کف دو դոքուֆե) եղանակին, այսինքն՝ կիսով կես։

Այն գյուղացիները, որոնք, բացի իրենց աշխատուժից, ուրիշ ոչինչ չունեն, մինչև իսկ վարձակալ չեն համարվում, պարզորեն կոչվում են «բարդեգար», և ստանում են բերքի մեկ հինգերորդ մասը։ Սերմացուն մեծ մասամբ տալիս է կալվածատերը նաև այն պատճառով, որ ըստ օրենքի, նախքան բերքահավաքը, պայմանագիրը բեկանվելու պարագայում, ցանքսը անցնում է սերմացուն տրամադրողին։

Բայց բերքի բաժանման այդ սիստեմները պրակտիկայում կիրառվում են ոչ լրիվ. գյուղացու բաժինը շատ ավելի պակաս է լինում, քան նշված քանակը։ Այդ մասին խոստովանում է մինչև իսկ Լամբտոնը։ Նա գրում է. «Բերքը բաժանելիս տրադիցիոն ձևով հաշվի են առնվում հինգ տարրերը... մինչդեռ դա միաստորեն տեսական արստրակցիայից մի բան էլ ավելի է և իրական բաժանումը, չնայած նյութապես կախված է այն բանից, թե այդ տարրեր տարրերը ում են պատկանում և ով է տրամա-

գրում, հազվագյուտ է կատարվում այն հիմունքներով, որ հինգ տարրերի համար հատկացվեն հավասար բաժիններ»[1]։

Գործնականում հնգամյա ֆորմուլան Իրանի բոլոր շրջաններում նույն ձևով չի կիրառվում։ Գոյություն ունեն բազմաթիվ տարաձևություններ։ Նայած տեղական պայմաններին, առանձին տարրերի տեսակարար կշիռը աճում է կամ նվազում։ Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ցանքսը ոռոգվում է, թե ոչ, շաթի (աշնանացան) է, թե սեյֆի (գարնանացան) և այլն։ Ոռոգման եղանակը գետից, կանաթից կամ ջրհորից նույնպես ազդում է բերքի բաշխման վրա։

Ընդհանրապես բերքի բաշխումը կատարվում է կալում, որտեղ հացահատիկն ու դարմանը անջատում և կուտակում են ըստ մասերի։ Այսպես, օրինակ, ենթադրենք կալվածատիրոջ բաժինը երկու երրորդ է, իսկ գյուղացուները մեկ երրորդ, ապա հացահատիկը և դարմանը առանձին բաժանում են երեք մասի։ Որոշ տեղերում, ինչպես, օրինակ, Քուրդիստանում կալվածատիրոջ իրավունքն է ընտրելու իր մասը։ Սովորաբար գյուղացին իրավունք չունի բերքի իր բաժինը կալից հեռացնել, քանի դեռ կալվածատերը իր բաժինը չի տարել։ Երբ բերքը բաժանվում է մասերի, կալվածատիրոջ կամ նրա մուբաշիրի՝ ներկայացուցչի կողմից դրանք կնքվում են գաջերով՝ բերքը անձեռնմխելի դարձնելու համար, որը կոչվում է մոհր քարդան կամ գաջ քարդան (مهر کردن یا داج کردن)։ Ընդհանրապես, որոշ բացառությամբ, ընդունված է, որ կալվածատիրոջ բաժինը կալից մինչև պահեստ (որը երբեմն գտնվում է քաղաքում) փոխադրելը մտնում է գյուղացու պարտականությունների մեջ։

Կալվածատերերը, բացի բերքի իրենց բաժնից, բազմաթիվ ուրիշ տուրքեր են պարտադրում գյուղացիներին։ Բոլոր այն դեպքերում, երբ գյուղացու բաժինը անասուն կամ սերմացու տրամադրելու հետևանքով ավելի է լինում, ապա կալվածատերը ծանրացնում է մյուս տուրքերը։

Ինչպես ասվեց, Իրանի տարբեր նահանգներում և տարբեր շրջաններում բերքի բաժանման և պարհակների տարբեր ձևեր գոյություն ունեն։ 1952—53 թթ. «Իրանի տարեգիրքը» երկրի տարբեր շրջաններում ստացված բերքից կալվածատիրոջ և գյուղացու բաժինների մասին հետևյալ աղյուսակն[2] է հրապարակել (տես հաջորդ էջը), որը, ինչպես տարեգիրն է գրում, կազմվել է «պաշտոնական զեկուցումների» հիման վրա և բավական հետաքրքիր թվական տվյալներ է պարունակում։

Պատկերը ավելի պարզ լինելու համար այժմ քննենք ընորոշ մի քանի նահանգներում կիրառվող բերքի բաշխման եղանակները և գյուղացիներին պարտադրված տուրքերի ու պարհակների ձևերն ու չափերը։ Օրինակ, Քիրմանի նահանգում այսպիսի կարգ են հաստատել. ամեն տարի գյուղացիներին որևէ հողամաս տալու համար նրանցից մի գումար են կորզում, որը կոչվում է «թակադումե» (مقدمه), կամ «թաարոֆ» (تعارف)։ Այս պրակտիկան գյուղացիության մեջ մրցակցություն է ստեղծում, որի հետևանքով ավելի շատ թաարոֆ վճարողը կարող է ավելի ընտիր հող ստանալ, հակառակ դեպքում գյուղացին կամ ցածր բերքատու հող կստանա, կամ էլ

[1] *A. K. S. Lambton*, Landlord and Peasant in Persia, London, 1953, էջ 306։

[2] «سالنامه کشور ایران سال ۱۳۳۱ تهران», էջ 184։

Երջաններ	Կալվածատիրոջ բաժնի մինիմումը	Կալվածատիրոջ բաժնի մաքսիմումը	Գյուղացու բաժնի մինիմումը	Գյուղացու բաժնի մաքսիմումը
Սավե և Ջարանդ	2/5	4/5	1/5	3/5
Հառադան	1/4	2/5	3/5	3/4
Նահավանդ և Թուլսերդան	1/3	2/5	3/5	2/3
Արաք	1/3	2/3	1/3	2/3
Գոլփայեգան և Մահալաթ	1/3	3/4	1/4	2/3
Վարամին	1/2	1/2	1/2	1/2
Իսֆահան և Յազդ	1/4	3/4	1/4	3/4
Բեջնուրդ	2/5	3/4	1/4	3/5
Քիրման	1/2	3/4	1/4	1/2
Ղազվին	1/3	1/2	1/2	2/3
Ֆարս	2/5	2/5	3/5	3/5
Խուզիստան	1/7	1/3	2/3	6/7
Արևմտյան Նահանդներ	1/5	1/3	2/3	4/5
Արևմտյան Ադերբայջան	1/10	1/2	1/2	9/10
Խորասան	1/2	5/6	1/6	1/2
Արևելյան Ադերբայջան	1/5	1/3	2/3	4/5
Լուրդիստան	1/5	1/2	1/2	4/5
Մորրան	1/3	3/4	1/4	2/3
Բրուջերդ և Խորամարադ	1/4	1/2	1/2	3/4

առանց հող կմնա։ Իսկ հողերը բաժանվում են մեկ տարի ժամկետով և սահմանափակ քանակությամբ։

Քիրմանում կալվածատերը տալիս է հողը, ջուրը, սերմացուն և երբեմն էլ անասունները։ Նրա բաժինը բոլոր տեսակի կուլտուրաներից, բացի աֆիոնից, կազմում է բերքի 75—80 տոկոսը։ Քիրմանի պայմաններում առանց ջրի հողը ոչ մի արժեք չունի և փաստորեն կալվածատերերը ոչ թե այս կամ այն հողամասի, այլ ջրի տերն են։ Այնպես որ կալվածատերերին հասնող բերքի բաժինը կարելի է համարել այն կապիտալի տարեկան շահույթը, որ նա ներդրել է կանաթի վրա[1]։

Քիրմանի Ռաֆսանջան գավառում կիսարարային պայմանագիրը կալվածատերը կնքում է գյուղացու հետ ամեն տարի աշնանը, այսպես կոչված՝ արրանդի (اب‌بندی) ժամանակ։ Հողը վարձակալող գյուղացին կոչվում է «սարզաիմ» (زعیم ر...), որը մշակմանը մասնակից է դարձնում նաև այլ գյուղացիների։ Հողագործության միջոցներ ունեցող յուրաքանչյուր գյուղացի համարվում է մի «մարդ» (مرد), և եթե աշխատել են 10 հոգի, ապա գյուղացուն հասնող բերքի բաժինը բաշխվում է 10 մասի։ Իսկ եթե գյուղացին չունի այն բոլոր միջոցները, այդ թվում և ֆիզիկական ուժ, որոնք անհրաժեշտ են մի «մարդ» հաշվվելու համար, ապա նա համարվում է «նիմ մարդ» (نیم مرد), այսինքն՝ կես մարդ և մի «մարդի» բաժնի կեսն է ստանում։ Գյուղացիների երեխաները մինչև 18 տարեկան հասակը նույնպես «նիմ մարդ» են համարվում։

Դրությունը նույնն է նաև Ադերբայջանում։ Կալվածատիրոջն է պատկանում հողը, ջուրը և հաճախ էլ անասուններն ու սերմացուն։ Կալվածա-

---

[1] «[illegible]», 1953, ապրիլի 25։

[2] «Royal Central Asian Journal», 1953 Jan vol. VL. partl. էջ 55։

տիրոջ բաժինը այստեղ էլ տարբերվում է $^4/_5$, $^2/_3$, $^1/_2$ և այլն։ Ադերբայջանում էլ, ինչպես գրում է «Բեհսույե այանդեհ» թերթը, կալվածատերերը հետևյալ միջոցներով են թալանում գյուղացիներին. 1. կալվածատիրոջ բաժին. 2. պարհակներ և հարկեր. 3. «օժանդակություն» և պարտք, որ հետ է գանձվում կրկնակի չափերով. 4. տուգանքներ. 5. կոռ ու բեգարություն[1]։

Ծանր և բազմազան են Ադերբայջանի գյուղացիության պարհակները։ Իրանական մեջլիսի 14-րդ նստաշրջանի դեպուտատներից մեկը մեջլիսի նախագահին ուղարկած իր նամակում, խոսելով այդ պարհակների մասին, գրում է. «... Չնայած համաձայն ներքին գործոց մինիստրության տարիներ առաջ կայացրած որոշման և Արևելյան Այզերբայջանի նահանգապետության եղած հրահանգի՝ որով միանգամայն արգելվել է «բեգաթ» կոչվող անօրինական տուրքերի գանձումը, այդուհանդերձ, որոշ գյուղատերեր ուղում են ուժի և խոշտանգումների միջոցով միջնադարյան անօրինական տուրքերը գյուղացիներից առնելով, նրանց մինչև իսկ հացի կարոտ թողնել։

Բեգաթները հետևյալներն են՝

Յութ արբասի, «եգդի արբասի» (այս տուրքը առնվում է թե պարսկերեն անունով և թե միևնույն ժամանակ եգդի արբասի թուրքերեն դարձվածքով), քառասունից մեկ, մարգաղլուխ, հավ, ձու, անվարձ աշխատանք, ոչխար, ներքնակի գրամ, եղան տուրք, յուղ, ձիու գարի, հյուրերի ծախս, գղիրի ծախս և այլն։ Մինչև իսկ Մաքուի գյուղերից մեկում «նասրեդդին շահի մոր պատանքի» անվամբ տուրք են ստանում։ ... Լիզվանում «աջի էհթեշամը իր գյուղերից հետևյալ տուրքերն էր ստանում.

1. Ամեն հավելումն գյուղատիրական բաժնի, ամեն մի տնից մի հավ ու տասը ձու։ 2. Ամեն մի տնից հինգ հարյուր ռիալ կանխիկ, ամեն մի տոտից մի գառն։ 3. Հարյուր ռիալ մի զույգ եզից։ 4. Ամեն մի գյուղացուց «մարգաղլուխ» տասը ռիալ։ 5. Անվարձ աշխատանք։ 6. Մեկ քառասուներորդ։ 7. Մարմանչելիք և այլն[2]։

Քուրդիստանում նույնպես վարելահողերի հիմնական մասը պատկանում է խոշոր կալվածատերերին։ Այստեղ էլ վարձակալության պայմանները և պարհակները բազմազան են, նայած տեղին և սովորություններին։ Իրանական պաշտոնական «էթթելաաթ» թերթը 1932 թվականին տպագրել է մի հոդված, որտեղ մանրամասն խոսվում է քուրդ գյուղացիների պարհակների մասին։ Հոդվածում նշվում է, որ, օրինակ՝ Քուրդիստանի գյուղերում մի ջուֆթի գիմաց կալվածատերը ստանում է՝ 1) կանխիկ գրամ 100—200 ռիալ, 2) յուղ 2—3 ման, 3) պանիր 1—2 ման, 4) միջակ գիրության հավ 6 հատ, 5) բեգարային աշխատող 10—25 հոգի, 6) էշի վող, 200—480 ռիալ, չնայած կալվածատերը ավտոմեքենա է օգտագործում, 7) նոր տարվա նվեր տարեկան 150 ռիալ. 50 զույգ կով ունեցող գյուղը պարտավոր է կալվածատիրոջը 10 ոչխար տալ, 8) որոշ գյուղերում՝ 100—200 հատ քակոր, 9) ձու 6—10 հատ, 10) 3—5 օր գալէ ջուֆթ (այսինքն՝ երբ գյուղացու կովը պետք է ձրի աշխատի կալվածատիրոջ համար), 11) որոշ գյուղերում՝ դարմանի երկու տասներորդը, 12) ցորենի և գարու բերքի

---

[1] «ասլաբ ասլ», 1932, մարտի 3։

[2] «Հակաֆաշիստ թերթ» (հայերեն), Թավրիզ, 1943, սեպտ. 12։

երկու ու կես տոկոսը որպես պետական հարկ, 13) երկու բիդոն ցորեն հավելյալ ձևով, որը կազմում է մոտ 10 ման։

Թերթը նշում է, որ այս բոլորից բացի, կալվածատերերը ստանում են նաև «Թիֆլիսանե», «Թեհրանանե», «նոր տարվա» և «ոչնչի» (ذبیحه، عیدانه، انعام) կոչվող տուրքերը։

«Թիֆլիսանե» կոչվող տուրքի էությունն այն է, որ գյուղացին այժմ էլ պարտավոր է հարյուր տարի առաջ կալվածատիրոջ պապի Թիֆլիս կատարած ճամբորդության ծախսերը հոգալու համար ըստ իր կարողության մի գումար վճարել։

«Թեհրանանե» տուրքը վճարվում է կալվածատիրոջ կնոջ Թեհրան կատարած ճամբորդության ծախսերի համար։

Կալվածատիրոջ ներկայացուցիչը՝ մորաշիրը, իր հերթին ևս մի տուրք է գանձում, որը պարզապես կոչվում է «ոչնչի» համար[1]։

Ադերբայջանում և Քուրդիստանում իշխող ֆեոդալական հարաբերությունների մասին հետաքրքիր վկայություն ունի անգլիական «Տոնթեմփորարի ոիվյու» ժուռնալը. «... Եթե որևէ մեկը,— գրում է անգլիական ժուռնալը,— իսկապես ցանկանում է տեսնել գործող ֆեոդալիզմը, թող ճամբորդի դեպի Քուրդիստան և Ադերբայջան... Այդ մասերում խոշոր կալվածատերերը իրենց վարձակալներից պահանջում են բերքի երկու երրորդը և միաժամանակ հանդես են գալիս որպես վաշխառուներ, 40 տոկոս ռենտայով[2]։

Համադանի շրջանը նույնպես աչքի է ընկնում բերքի բաշխման և պարհակների բազմազանությամբ։

1953 թվականին պատահում է այսպիսի մի դեպք։ Համադանի շրջանում Նեգար Խաթուն գյուղի գյուղացիները մերժում են կալվածատիրոջ բաժինը տալ։ Կալվածատերը արդարադատության օրգանների միջոցով պաշտոնական գրություններ է ուղարկում ամեն մի առանձին գյուղացու անունով, որով պահանջում է իր բաժինը։ Գրության մեջ ասվում է. «Ձեզ հայտնում ենք, որ Համադանի նահանգապետության, ժանդարմերիայի և արդարադատության մոտ ձևակերպված և գոյություն ունեցող գործերի, հետաքննությունների և կենտրոնական մարմիններին ուղղված բազմաթիվ գանգատների համաձայն, դուք այս տարի գյուղում խլրտում ստեղծելով և իմ ներկայացուցչին սպառնալով ու ճնշելով, գյուղապետին փոխելով և, վերջապես, անընդունելի և ինքնագլուխ կերպով, ձեր ցանկությամբ բերքը հավաքել եք և ամեն մեկդ ըստ ձեր հայեցողության և առանց կալվածատիրոջ ուղղակի հսկողության, որոշ քանակի ցորեն և գարի հանձնելով, խուսափել եք վճարել կալվածատիրական բաժնի մնացած ցորենը և գարին. նույնպես և դարմանն ու խոտը, այդուց և բանջարանոցից (սեյֆի) հասանելիք բաժինը, արոտավճարը (ալաֆչար), բերքը քաղաք փոխադրելու վարձը և հողավճարը։ Կալվածատիրոջ բաժինը ապահովելու համար արդարադատության պաշտոնական մասնագետը ստիպված է, որ յուրաքանչյուր գոջի դիմաց դուք պարտավոր եք վճարել՝ 1) ցորեն և գարի 6 խարվար, 2) դարման՝ 2 խարվար, 3) խաղող՝ 1 թանարից 150 ման, 4) բան-

[1] «اطلاعات», 1952, օգոստոսի 30։

[2] «Contemporary Review», 1953, № 1053, էջ 262։

ֆարանոցի 1 թանարից 500 ռիալ, 5) խոտի մեկ թանարից՝ 1250 ման չոր խոտ, 5) խոտարածի դիմաց ամեն մի կովին, էշին և այլն 20 ռիալ և ամեն մի այծին ու ոչխարին 10 ռիալ, 7) բերքը քաղաքի պահեստը փոխադրելու վարձ՝ խաբվարը 50 ռիալ, 8) տան հողավճարը մետրը մեկ ռիալ... Այս ամենը պետք է երեք օրվա ընթացքում վճարեք, եթե ոչ համաձայն իմ վրա, որպես կալվածատիրոջ ներկայացուցչի, գրված պարտականությունների, ես ստիպված կլինեմ օգտվելով պետական օրենքի 3-րդ հոդվածից, ձեզանից այդ բոլորը պահանջել և գանձել կրկնակի չափով, ավելացնելով դրան նաև դատական ծախսերը»։ Այնուհետև թերթը շարունակում է, որ այդ միայն օրինական պահանջներն են, և եթե դրան ավելացնենք «Նասրեդդին Շահի մոր պատանքի փողը, բեսմելայի, թոչուն թոցնելու, ծխելու, արևի, մոլայի» և այլն պարհակները, ապա «թալանչիների ոճրագործությունների միայն մի մասը թվարկած կլինենք»[1]։

Թեհրանի շրջանը աչքի է ընկնում, այսպես կոչված, գավրանդիներով (گاوبندی)։ Յուրաքանչյուր գավրանդ (անասուններ ունեցող) ունենում է 4—6 եզ։ Թեհրանի շրջանի գյուղացիները անասուններ չունեն, ուստի և նրանք պայմանագրային կարգով գավրանդի հետ միասին ձեռնարկում են հողի մշակմանը։

Բերքը սկզբից բաշխվում է գավրանդի և կալվածատիրոջ, իսկ եթե կալվածատերը արենդով է տվել ինչ որ երրորդ անձնավորության, ապա սրա և գավրանդի միջև, որից հետո գավրանդի բաժինը բաշխվում է գավրանդի և գյուղացիների միջև։ Երբեմն այդ բաշխումը հետևյալ պատկերն է ունենում։ Բերքի 50 տոկոսը վերցնում է կալվածատերը՝ հողի և ջրի դիմաց, 25 տոկոսը գավրանդը՝ անասունների և սերմացուի դիմաց, իսկ մնացած 25 տոկոսն էլ բաժանվում է գյուղացիների միջև, որոնց թիվը լինում է մոտ 4 հոգի։ «... Այդպիսի գյուղերում,— գրում է «էթթելաաթ» թերթը,— միայն գավրանդի դրությունն է համեմատաբար լավ, իսկ գյուղացիների դրությունը շատ վատ է և միշտ հուսահատ վիճակում են ապրում, քանի որ բացարձակապես ապագայի նկատմամբ վստահ չեն և միշտ գավրանդի կողմից ենթակա են վտարման...»[2]։

Թեհրանի շրջանի գյուղացու ընտանիքի միջին եկամուտի մասին պատկերացում կազմելու համար կարելի է բերել հետևյալ օրինակը։ Իտալական Կոմունիստական պարտիայի օրգան «Ունիտա» թերթի հատուկ թղթակից Մաչոկին, 1951 թվականին այցելելով Իրան, գրում է. «Իմ հավաքած տեղեկությունները վկայում են հետևյալը. Շարեզանում (Թեհրանից 20 կիլոմետր հեռավորության վրա) հինգ հոգուց բաղկացած գյուղական ընտանիքը մեկ տարվա աշխատանքի համար ստացել էր 50—55 կիլոգրամ ցորեն, 105 կիլոգրամ գարի և 30 թուման դրամ։ Ընդ որում պետք է նշել, որ տարվա ընթացքում աշխատել էին ընտանիքի բոլոր հինգ անդամները։ ... Մի իտալացի բժիշկ, որն աշխատում էր Իրանում... պատմեց ինձ, որ ... ամսական 150 ռիալ փող վաստակող գյուղացին Իրանում համարվում է երջանիկ։ Իրանական գյուղերում այսպիսի ասացվածք կա՝ ուտում ես այնքան, որպեսզի չմեռնես սովից»[3]։

---

[1] «بانك مردم»، 1953، ապրիլի 24։

[2] «اطلاعات»، 1953، հուլիսի 20։

[3] *М. Мачокки*, Иран в борьбе, Москва, 1953, стр. 112.

Գյուղացու նկատմամբ դաժան վերաբերմունքի և խիստ շահագործման լավագույն ապացույց է միջնադարյան կոռային աշխատանքի պահպանումն իրանական գյուղում։ Բեգարությունն ընդունված է հատկապես Քուրդիստանում, Ադերբայջանում, Խուզիստանում, Ֆարսի որոշ մասերում, Քիրմանում և Արևելյան Իրանում։ Գյուղացիներից բեգարային աշխատանքը պահանջվում է տարբեր ձևերով։ Քուրդիստանում, օրինակ, սահմանված է, որ յուրաքանչյուր ջուֆթի դիմաց գյուղացիները պարտավոր են մի քանի օր բեգարային աշխատանք կատարել կամ անասուններ տրամադրել։ Սանանդաջի մոտ գտնվող Հասանաբադ գյուղում ամեն մի ջուֆթից պահանջվում է տարեկան 7 օրվա գյուղացու աշխատանք և 4 օրվա էշի աշխատանք։ Դա կոչվում է հաֆթ նաֆարի (هفت نفری) և չահար օլաղի (چهار الاغی) պարտականություն։ Բացի այդ, գյուղացիները պարտավոր են գարնանը հողատիրոջ այգում աշխատել։ Յուրաքանչյուր տնից էլ պահանջվում է երկու օրվա ձրի աշխատանք[1]։

Վերը բերած մեր տեղեկություններն ու փաստերը իրանական գյուղացիության ծայրահեղ շահագործման մասին, չեն սպառում գյուղացու ծանր վիճակի նկարագրությունը։ Գյուղացիական լայն մասսաների արյուն քրտինքով հղփացող կալվածատերերի, սուբարենդատորների, մուրաշերների, քեգխոդաների և այլ պարազիտների հսկա բանակին պետք է ավելացնել գյուղի առևտրականներին, չարչիներին և հատկապես վաշխառուներին։

Շատ դիպուկ է «Ինտերնաշենալ լեյբոր ռիվյու» ժուռնալի գնահատականը. «Վերևում խագավորը և նրա արքունիքը, ներքևում գյուղացիական մասսաները, իսկ նրանց միջև պարազիտների երեք աստիճան՝ առևտրականները, չինովնիկները և արիստոկրատները...»[2]։

* * *

Այսպիսով, ենթարկվելով տեղական կալվածատերերի ու բուրժուազիայի և օտարերկրյա մոնոպոլիաների կրկնակի շահագործմանը, Իրանի գյուղացիական մասսաները դատապարտված են կիսաքաղց և թշվառ գոյություն քաշ տալու։ Բայց իրանական գյուղացիությունը արդեն արթնացել է։ Վերջին տասնամյակներում Իրանում ծավալվեց բանվորական և գյուղացիական հզոր շարժում։ Ամրացավ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Իրանի բազմամիլիոն գյուղացիությունը բանվոր դասակարգի և նրա ավանգարդ «Թուդեհ» պարտիայի առաջնորդությամբ ոտքի է կանգնել ազատություն և հող ձեռք բերելու համար։

---

[1] «دسوی ابلد», 1953, հունվարի 21։

[2] «International Labour Review», Jan. 1951, vol. LXIII, № 1, էջ 27։